

ԱՄԲՐՈՍԻՈՍ ԹԵՍԵՈՍԻ «ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ»  
ԳՐՔԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Գ. Հ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ամբրոսիոս Թեսեոսի «Ներածություն քաղաքներն լեզվի, ասորերենի, նաև հայերենի և տաս այլ լեզուների» գիրքը, ըստ մեր իմացությունից՝ հայագիտության մեջ արժարժվել է սկսած դեռևս 1881 թ. և, կարելի է ասել, շատ: Սակայն, համառոտ թե ընդարձակ՝ ըրողը անգրագարձները մնացել են մատենագիտական-նկարագրական բնույթի սահմաններում: Այսպես, գրքի մասին գրող մեր առաջին հեղինակը եղել է պատմաբան Ալեքսանդր Երիցյանը, նրա խոսքի ամբողջությունն էլ հետևյալն է. «1536 թվին Պավիա քաղաքում արևելագետ Թեսեոս Ամբրոսիոսը արևելյան լեզվաց մի տեսություն հրատարակեց, որի մեջ հայոց լեզվի վրա խոսելով, քանի մի երես էլ հայերեն տառերով գրվածքի տպագրությանը նվիրեց»<sup>1</sup>: 1895 թ.՝ նույն տարում երկու անգամ Ամբրոսիոսի գիրքը նկարագրել-նեբկայացրել է Գ. Զարպչանյանը. առաջինում թվարկել է Հայաստանի և հայերի մասին հեղինակի իրական և առասպելական իմացությունները, արձանագրել, որ առավելապես Սուրբ գրքով, գործածելով նաև Պորփյուրի գրքերը, նա բերել է մեր լեզվի այբուբենը, ներկայացրել ձայնավորները և բաղաձայնների բաժանումը<sup>2</sup>: Երկրորդ առիթով Ամբրոսիոսի գրքից քաղած տեղեկություններով ներկայացրել է նրա կենսագործունեությունը և շեշտել, թե նրա նպատակը եղել է ասորերեն Սաղմոսարանի տպագրությունը, իսկ այս գիրքը պատրաստել էր որպես Սաղմոսարանի ներածական. նրա հայերեն տպատառերը համարել է «բավական ճաշակով և ընտրությունամբ հերյուրած», ապա բերել է Ամբրոսիոսի տառերի չորս տողանոց մի նմուշ<sup>3</sup>:

Հաջորդ համառոտ նկարագրության հեղինակը վիեննական Մխիթարյան միաբան Արիստակես վ. Վարդանյանն է, որ նկատելով Ամբրոսիո-

1 Ա. Երիցյան. Պատմական տեսություն հայ տպագրության. մինչև տասնևիններորդ դարը.- «Փորձ» հանդես, Դ/1881, էջ 2:  
2 Տե՛ս Գ. Զարպչանյան. [Աղուֆ Շրումպֆ]. Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության ի Արևմուտս (ԺԴ-ԺԹ դդ.), Վենետիկ, 1895, էջ 40-42: Արսեն Ղազիկյանն իր նշանավոր գործի մեջ, որն է նոր բան չավելացնելով, նույնությամբ վերարտադրել է այս էջերը. տե՛ս Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, Կազմեց Հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան Մխիթարյանց. հ. Ա, Ա-Մ, Վենետիկ, 1895, էջ 741-3:  
3 Գ. Զարպչանյան. Պատմություն հայկական տպագրության. սկզբնապորտներն մինչև առ մեզ. Վենետիկ, 1895, էջ 33-5:

սի վերջաբանում (192բ) մատնանշված՝ «տպագրական գործքերու բանուկ հարաբերութիւն... Վենետիկ, Փերրարա (և Բավիա) քաղաքներու միջև», վստահ է՝ թե Հակոբ Մեղապարտի գրքերի D.I.Z.A. գրերի առեղծվածը պետք է լուծվի «Վենետիկյան հողույն վրա»<sup>4</sup>: Ապա Թեոգիկն է կրկնել գրքին վերաբերող նվազագույն տեղեկութիւնները և բերել նրա մի էջի վերարտադրութիւնը<sup>5</sup>, ի վերջո՝ թվարկված գիտելիքները վերարծարծել են Գ. Լևոնյանն ու Ռ. Իշխանյանը<sup>6</sup>: Վերջին անգրագարձը գրքի նկարագրութիւնն է, որ ընդունված՝ տրամաբանական ու ինամբոտ սկզբունքով ներկայացված է հայերեն հնատիպ գրքի մատենագիտութեան մեջ<sup>7</sup>. Խորհրդարանի և հիշատակարանի գրքի լուսանկարչական վերարտադրութիւն, չափսերի և արտաքին հատկանիշների նկարագրութիւն, գլուխների խորագրերի և հայերեն բնագիր ունեցող էջերի ու նյութերի, ապա՝ գիրքն ունեցող գրագրանների և նրան վերաբերող գրականութեան թվարկում. այս ամենը տալիս է գրքին վերաբերող գրագիտական – մատենագիտական կատարյալ պատկերացում:

Սակայն չափազանցութիւն չի լինի, եթե ասենք, որ հայագիտութեան մեջ այս գրքի գիտական, առանձնապես՝ լեզվաբանական քննութիւն գեռևս չի արվել: Մենք նույնպես նման քննութիւն չենք անում. նպատակ ունենք միայն շեշտելու նրա կարևորութիւնը և նրա վրա հրավիրելու հայերենի պատմական լեզվաբանութեան հարցերով զբաղվող մասնագետների ուշադրութիւնը: Հենց սրա համար էլ, ուրիշներին չկրկնելով, հայերենի նմուշ-նյութերը նկարագրել-թվարկելով, վերջում փորձում ենք մոտավոր ձևով պարզել գրքի հայկական աղբյուրների հարցը:

Այլ լեզուների նկատմամբ եղած համապատասխանութիւնների կամ տարբերութիւնների բացահայտման նպատակով հայերեն գրերի և հնչյունների մասին հեղինակը խոսում է բազմաթիվ էջերում (գրերը դնելով հայատառ կամ լատինատառ), ուստի և այսպիսի էջերը չենք թվարկում, որովհետև գիրքս քննող լեզվաբանը պետք է ծայրեծայր կարգա այն: Լատիններեն տառադարձութեամբ ուղեկցվող աստվածաշնչական – եբրայական հայատառ անձնանուններ կան գրքի հետևյալ էջերում. 16բ, 17ա–18ա, 60ա, 122բ. նախադասութիւններ և դարձվածներ՝ 18բ, 38բ, 51բ, 56բ, 71բ (տպված՝ 68):

Ձուտ հայերենի ներկայացում-քննութեանը վերաբերող մասը 142բ–176բ հատվածն է: Բոլոր տեսակի նմուշները բերված են նախ հայատառ, ապա՝ լատինատառ, վերջում՝ լատիններեն. մի օրինակ՝ 151ա «գմեղս ատեցի և

4 Հ. Ա. Վ ա ղ ա ն յ ա ն. Տպագրութեան 400-ամյակին առթիվ. – «Հանդես ամսօրյա», Ե/1912, ս. 307–309:

5 Թ ե ո գ ի կ. Տիպ ու տառ. «Գիր»-ին ծագումն և միջազգային ու հայկական տպագրութեան վրա ձգված ակնարկ մը. Կոստանդնուպոլիս, ՌՅԿԱ [1912], էջ 48–49:

6 Գ ա ղ ե ղ ի ն Լ լ յ ա ն. Հայ գիրքը և տպագրութեան արվեստը. պատմական տեսութիւն սկզբից մինչև XX դարը. Երևան, 1958, էջ 58–59, Ռ. Իշխանյան, 1, էջ 298–300:

7 Ո ս կ ա ն յ ա ն. էջ 779–780:

անարգեցի և զօրենս քո սիրեցի / *Zmegls atezti eu anargezti eu zorens cho sirezti / Iniquitatem odio habui et abominatus sum et legem tuam dilexi*:

142բ–143ա. «*Armenorum literae et eorum nomina*» (Հայոց գրերը և նրանց անունները). մի տողում Հայերեն տառերն են, երկրորդում՝ նրանց Հնչուժը՝ լատինատառ, երրորդում՝ տառանունը լատիններեն գրերով. բաղաձայնները ներկայացնում է թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ Հնչուժով՝ «բ /b p/ byen pyen», «դ /d t/ da ta», «կ /c, d, k, q/ chien, gien, kien, quien», «ղ /p, b/ pe, be», «պ /p, b /pe, be». Նշանակում է՝ Հեղինակը շփոթման է ունեցել և՛ արևելահայ, և՛ արևմտահայ անհատների հետ: Միայն Ա ա, Յ յ, Շ շ, Պ պ գրերն ունեն մեծատառ և փոքրատառ, մյուսները միակերպ՝ փոքրատառ են. մաշտոցյան շարքից հետո դրված է «և» կցագիրը (*eu/ieu*), ապա Հավելվածային «Ֆ»-ի փոխարեն կրկնել է «փ»-ն, վերջում գրել «օ»-ն. «աւ»-ին փոխարինող «օ»-ն լատինատառ տառադարձության մեջ միշտ արտահայտում է հունարենի «Ω» գրով. պատվի նշանով «ութիւն» ածանցի «ւթի» համառոտումը միշտ գրել է սխալ՝ «ութաի» ձևով: Հետագա էջերի նմուշների մեջ հաճախ շփոթել և «չ» տառը դրել է «ղ»-ի տեղը. որոշ գրեր հաճախ տպվել են շրջված, առանձնապես շփոթվել են ո-ն և ս-ն՝ հաճախ մեկը գրվել է մյուսի փոխարեն և այլն. նկատելի է նաև «է»-ի փոխարեն «ե» գրելու հաճախադեպությունը. «աստուած» բառի տառադարձությունը գրեթե միշտ «astutz» – «աստուծ» է (խոսակցական Հայերենի ազդեցություն). կան այլ շփոթություններ կամ մեկի փոխարեն մի այլ դիր գործածելու փաստեր, որոնց թվարկումն անիմաստ ենք համարում:

143ա–174բ «*De divisione literarum Armenorum. Cap. XIII*» (Վասն բաժանման Հայերէն տառից):

Սկզբում թվարկում է ձայնավորները, ապա՝ բաղաձայնները (143բ), երկհնչյունները (144ա՝ *De diphtongis armenicis*), հետո՝ բաղաձայնների բաժանումը (144ա՝ *De divisione consonantium*), ապա սկսում է այբուբենի կարգով ներկայացնել բոլոր տառերը, ամեն դեպքում սկսելով այդ տառով սկսվող աստվածաշնչական անունների թվարկումով. 145բ՝ «Աբել, Աբիուդ, Աբիսաբ, Ասափ, Ադովնայ», 147բ՝ «գաղ, գոմոր, դորդիանոս, գէորգէոս, դլարեա, գունթինոս, գրիգորիոս, դողդոթա, գաբրիել»: Սրանց միշտ Հաջորդում են նույն տառերով սովորական բառեր, կասկածություններ և նախադասություններ. 174բ՝ ունի «*De syllabis servilibus Armeniorum. Cap. XV*», իսկ Հայերենի այստեսակ թեք ձևերի նմուշների մեջբերումներն ավարտվում են 176բ էջում:

185ա «*Exercitamentum Armen. Linguae. Mattaei Cap. VI*». տերունական աղոթքը՝ «Հայր մեր որ յերկինս գես (սխալ բառանջատում – Գ. Տ-Վ.) ... փառք յաւիտեանս. Ամեն».

186ա՝ «*Salutatio Angelica*» – «ուրախ լեր մարիամ... զմահու մերում. Ամեն»:

189բ, 190բ՝ «ի աւետարան ըստ զՂուկաս. ա. մեծացուցէ անձն իմ գտր... զի վարձք ձեր բազում են յերկինս»:

190բ, 191բ՝ «երկոտասանիցն առաքելոցն անուանքն. ի Մատթէոսի. ժ. – Առաջին սիմոն անուանեալն Պետրոս... ի մարմնոց յարութին. ի կեանսն յաւիտենականս. Ամեն».

196բ–197բ՝ «Աւետարան ըստ Մատթէոսի – Գիրք ծնընդեան Յիսուսի Քրիստոսի որդոյ դաւթի... ի քրիստոս ազգք չորեք տասանք»:

Մի քանի խոսք Ամբրոսիոս Թեսեսոսի հայերեն աղբյուրների մասին.

ա. Ձեռքի աակ ըստ ամենայնի եղել է հայերեն կատարյալ և կանոնական պարունակությամբ՝ բոլոր գրքերն ունեցող մի Աստվածաշունչ, որովհետև անուններով և համապատասխան գլխահամարների նշումներով վկայակոչումներ է անում Հին և Նոր կտակարանների գրեթե բոլոր նախականն և երկրորդականոն գրքերից. անիմաստ համարեցինք ստուգումներ ու համեմատություններ անելը՝ թե որ գիրքը կամ որ հատվածն է օգտագործել ու վկայակոչել:

բ. «Պորփիրի Ներածութիւն Ստորագութեանցն Արիստոտէլի»՝ 144բ՝ «Porphirii Praedicabilia Aristotelis Logicalia» (նույնի հիշատակություն տե՛ս 146բ, 169բ).

գ. «Արիստոտէլի Պերիարմենիաս» – 156բ՝ «apud Aristotelem in Periarmentias» (հղումներ՝ այլ էջերում ևս, օրինակ՝ 165բ, 168բ՝ Պերիարմենիաս, Պերլարմենիաս):

դ. «Արիստոտէլի Նախերգան Յաղագս աշխարհի օ»՝ 174բ. «Apud Aristotelem in Praedicabilibus»:

ե. Դաւիթ Անյաղթի «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի»՝ 175բ՝ «Et apud Porphirium. ի վերլուծականսն»:

զ. Անպայման ունեցել է նաև ունիտորական հայերեն հիմնականում լատիններենից թարգմանված ծիսական (ժամագիրք – Աղոթամատուց կամ այլ ժողովածու) և գավանաբանական նյութեր (համտ 152ա՝ «գերանելին Ամբրոսիոս սպասաւոր»), որոնց մեկ առ մեկ պարզումն ավելի մանրակրկիտ համեմատություններ է պահանջում:

Մեր պարզած այս իրողությունները ճշգրիտ և, այդուհանգերձ, նախնական համարելով, վստահ ենք, որ Ամբրոսիոս Թեսեսոսի «Ներածության» հայագիտական արժեքի ու արժանիքների պարզումն ու պարզաբանումը նոր է սկսվում: Համոզված ենք նաև, որ Իտալիայի զանազան քաղաքային գրադարանների ու արխիվների (բացի՝ Վենետիկի Մխիթարյան և Վատիկանի առաքելական գրադարանների ունեցածից) հայերեն ձեռագրերի ցուցակի (կազմում է Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, Գաբրիելա Ուլուհոջյանը) հրապարակումից հետո հնարավոր է լինելու սլարգել նաև Ամբրոսիոս Թեսեսոսի ձեռքի տակ եղած որոշակի ձեռագրերը, որով ավելի հնարավոր է դառնալու առարկայական համեմատություններ ու եզրակացություններ անելը: